ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/15Փ» ծածկագրով գնման ընթացակարգի* գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝
23.02.2026թ.
ժամը 16:30
ավարտ՝
12.03.2026թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)	Նորիկ Մնոյան

Հանձնաժողովի անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Ռիմա Հարությունյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Հրանտ Մինասյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Աննա Ավագյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Էդգար Ֆրանգուլյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցված նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնո համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Լուսինե Աբովյան

«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/15Փ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ:
2. Տեղեկություն՝ Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ:
3. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:
4. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին:
5. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված ծառայությունների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի

նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գինը.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի գնման գինը	Չափաբաժնի անվանումը
1	1 212 750	**Մ-10, Սևան-Մարտունի-Վարդենիս-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ76+800-կմ91+500 հատվածի (նախկին՝ Մ-11, Մարտունի - Վարդենիս - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ10+800-կմ25+500 հատվածի) հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ**
2	457 875	**Մ-10, Սևան-Մարտունի-Վարդենիս-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ91+500-կմ95+200 հատվածի (նախկին՝ Մ-11, Մարտունի - Վարդենիս - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ25+500-կմ29+200 հատվածի) հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ**
3	990 000	**Մ-10, Սևան-Մարտունի-Վարդենիս-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ95+200-կմ104+200 հատվածի (նախկին՝ Մ-11, Մարտունի - Վարդենիս - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ29+200-կմ38+200 հատվածի) հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ**

2. Տեղեկություն՝ Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ

2.1 Ընթացակարգի հայտը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել է սահմանված ժամկետում՝ **2026 փետրվարի 23-ին, ժամը՝ 15:00-ին**:

2.2 Սահմանված կարգով ներկայացվել է 3 հայտ, որն ընդունվել է Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի:

2.3 Ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները՝

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«Պրոմեթեյ» ՍՊԸ	ք. Երևան, Նար-Դոսի փող., 75 շ., բն. 9	**02847013**	v19512014@yandex.ru Հեռ.+374 98 40 55 98
2	«Արման-Երեմ » ՍՊԸ	ք. Գավառ, Գ. Միքաելյան 19	**08414485**	armanerem@mail.ru Հեռ.+374 93 19 66 68
3	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	ք. Երևան, Կոմիտաս 54բ	**01508665**	ekspertizaproektov@mail.ru Հեռ.+374 93 80 00 09

3. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:

3.1 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

3.2 Մասնակցի էլեկտրոնային հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

4. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին

4.1 Ընթացակարգի շրջանակներում յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը

Չափաբաժին1: Մ-10, Սևան-Մարտունի-Վարդենիս-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ76+800-կմ91+500 հատվածի (նախկին՝ Մ-11, Մարտունի - Վարդենիս - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ10+800-կմ25+500 հատվածի) հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«Պրոմեթեյ» ՍՊԸ**	**880 000**	**0**	**880 000**
2	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	1 000 000	200 000	1 200 000
3	«Արման-Երեմ» ՍՊԸ	1 200 000	0	1 200 000

Չափաբաժին2: Մ-10, Սևան-Մարտունի-Վարդենիս-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ91+500-կմ95+200 հատվածի (նախկին՝ Մ-11, Մարտունի - Վարդենիս - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ25+500-կմ29+200 հատվածի) հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«Պրոմեթեյ» ՍՊԸ**	**335 000**	**0**	**335 000**
2	«Արման-Երեմ» ՍՊԸ	450 000	0	450 000
3	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	380 000	76 000	456 000

Չափաբաժին3: Մ-10, Սևան-Մարտունի-Վարդենիս-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ95+200-կմ104+200 հատվածի (նախկին՝ Մ-11, Մարտունի - Վարդենիս - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ29+200-կմ38+200 հատվածի) հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«Պրոմեթեյ» ՍՊԸ**	**720 000**	**0**	**720 000**
2	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	800 000	160 000	960000
3	«Արման-Երեմ» ՍՊԸ	980 000	0	980 000

4.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

5. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

5.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

5.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

6.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների ընտրված մասնակից ճանաչել՝ **«Պրոմեթեյ» ՍՊԸ-ին:**

6.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

6.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

6.4 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Նորիկ Մնոյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Ռիմա Հարությունյան**	.....
	Հրանտ Մինասյան	.....
	Աննա Ավագյան	.....
	Էդգար Ֆրանգուլյան	.....
Քարտուղար՝	**Լուսինե Աբովյան**	.....